

Տ. ՄԱՏԹԵՈՍ ԱՔԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՈՎԱՍԱՓ ՍԵՔԱՍՏԱՑՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16-րդ դարի հայ մատենագրության համեստ մշակներից Հովասափ Սեբաստացին ոչ միայն իր զգացմունքներն ու հոգևոր բարեպաշտական ապրումներն է թողին հանձնել, ինչպես նաև գրել տոմարագիտական ու մեկնաբանական բնույթի մի շարք երկեր, այլև ուղղակիորեն ու անուղղակիորեն արձագանքել ժամանակի ազգային-հասարակական կյանքի հուզող խնդիրներին, սպասումներին ու ակնկալիքներին:

Ժամանակի իրադարձությունների ծանր և անմիջական ազդեցության ներքո են գրված «Վասն մեղաց մեր մահացու» և «Փրկիչ մի՛ տար զմեզ ի փորձանք չարին» սկսվածքներով բանաստեղծությունները, որոնց մեջ հիշվող դեպքերը կատարվել են 1540-50-ական թվականներին: Ընդհանրապես անհրաժեշտ է նշել, որ այս և հաջորդող տասնամյակները Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև ընթացող պատերազմների մի տևական ժամանակաշրջան էին, և այդ հակամարտությունը տեղի էր ունենում Արևմտյան ու Արևելյան Հայաստանի տարածքներում՝ մեծ ավերածություններ պատճառելով հայ ժողովրդին: Այդ ավերածությունների և ամպագման բարձրակետն էր դառնալու Ծաֆ Աբասի 1604 թ. կազմակերպած բռնագաղթը, որի նախօրինակը արդեն գտնում ենք Հովասափի ապրած ժամանակաշրջանում: Ասվածի համար բնորոշ է հետևյալ օրինակը: Ծաֆ Թահմազը գրում է, որ թուրքական բանակի առջևից նահանջելուց առաջ ինքը պատվիրում է հրկիզել և այրել այն տարածքները, որտեղից իրենք նահանջելու էին. «Երբ ես լուր ստացա, որ Խոնդկարը հասել է Սվազ և պետք է երեք շաբաթ այնտեղ սպասի, մինչև որ ուղտերը յուղեն, ես ինձ մոտ հրավիրեցի շրջակա վայրերի ավազներին, երևելիներին և քաղխուդաներին և հայտնեցի նրանց, որ կարգադրված է իմ զինվորներին՝ նահանջելով թուրքական բանակի առջևից, այրել և ոչնչացնել մոտակա վայրերի բոլոր հացահատիկն ու բերքը: Այդ վայրերի հացահատիկը ոչնչացրինք և այրեցինք, իսկ ջրի ակունքները փակեցինք: Որովհետև ինչպես ամեն մի խելացի մարդու համար պարզ է, պատերազմի գործը թղթախաղի նման է. ինչ միջոցով էլ որ լինի՝ պետք է գործը առաջ տանել և հակառակորդին ծնկի բերել: «Պատերազմը խարդախություն է,- ասել է Ալին,- պատերազմի ժամանակ, լինի փախչելով, լինի խաբելով, այնպես պետք է անել, որ թշնամուն ոչ մի միջոց չտրվի»¹:

«Փրկիչ, մի՛ տար զմեզ ի փորձանք չարին» բանաստեղծության մեջ Հովասափը հատուկ շեշտում է, որ այս կոիվներից տուժում էին հատկապես քրիստոնյաները, քանի որ նրանք էին կազմում երկրի հիմնական բնակչությունը.

Անթիւ արիւն հեղին քրիստոնէայ ազգիւն,

¹ Տ. Փափազյան, Մարենադարանի պարսկերեն հրովարտականք, հր. Բ, Երևան 1959, էջ 8:

*Անթիւ եկեղեցիք, որ աւերեցին,
Վանորեայք, սրբութիւնք հրձիգ արարին,
Խարանաւք թագում տեղ քանտեալ քակեցին,
Առ և աւար, անպարտ արին շատ հեղին՝²:*

Դիմելով Փրկչին, որ մեզ չենթարկի մամն փորձությունների, միաժամանակ միջնադարյան ընդունված աշխարհայացքով Հովասափը այս ամենի պատճառը համարում է գործված մեղքերը, որոնց պատճառով աշխարհն է սասանվում և ավերվում:

*Փրկի՛չ, մի՛ տար զմեզ ի փորձանք չարին,
Նշանք և արհաւիրքս այս, որ կու լինին.
Վասն մեղաց մերոց աշխարհ տատանին,
Պատերազմ և աւերք յաշխարհ տարածին:*

Այս իրադարձությունները Սեբաստիայում մեծ արձագանք են գտել և ծանր տպավորություն են թողել, որովհետև այս քաղաքը ևս ավերման անմիջական սպառնալիքի ներքո էր: Այս մասին Հովասափը գրում է.

*Առաւել խրոխտային Սեբաստիային,
Բայց ոչ հասաւ այն պեղծն ի կամս սրտին՝³:*

Այն, որ համատարած ավերածությունների մեջ Սեբաստիան չի ավերվել, Հովասափը բացատրում է աստվածային խնամքով և Սեբաստիայի նահատակ Քառասուն մանկանց բարեխոսությամբ.

*Խնամքն աստուածային և Սուրբ Քառասնին
Պահեաց զՍեբաստիայ և զերկիր սորին՝⁴:*

Սեբաստիային ևս սպառնացող այս արհավիրքին Անանուն Սեբաստացուց և Հովասափ Սեբաստացուց բացի անդրադարձել է և մեկ այլ սեբաստացի՝ Թադեոս վարդապետ Սեբաստացին⁵:

1547-48 թթ. այս իրադարձություններին է վերաբերում Սեբաստացու նաև հաջորդ՝ «Վասն մեղաց մեր մահացու» սկզբնատողով բանաստեղծությունը: Ինչպես այս տողն իսկ հուշում է, այստեղ ևս վերահաս աղետների պատճառ է համարվում գործված մեղքը:

Քաղաքի հնարավոր ավերման սարսափի տակ գտնվող բանաստեղծը այստեղ ևս ա-

² Հովասափ Սեբաստացի, Բանաստեղծություններ, աշխարհ. Վ. Պ. Գևորգյանի, Երևան, 1964, էջ 88:

³ Նույն տեղում, էջ 88:

⁴ Նույն տեղում:

⁵ Տե՛ս Ն. Ղ. Ալիշան, Հայապատում, Ս. Ղազար, 1901, էջ 593-595, ինչպես նաև Ն. Մ. Չամչյան, Պատմություն հայոց հար. Գ. Վենետիկ, 1783, էջ 514:

պալիմոմ է Աստծուն և Քառասուն մանկանց բարեխոսությանը.

*Բայց յուսանանք ի Տէր Նորու
Եւ յօգնութիւն Սուրբ Քառասնու,
Չողորմութիւնն անրաւ հեղու՝
Փրկէ զգառիս ի գալլերու՝:*

Այստեղ, ինչպէս նշում է Վ. Գևորգյանը, Նորու բառը Սեբաստիա իմաստը ունի և ոչ թե՛ նորից, վերստին, քանի որ միջնադարյան մատենագրության մեջ Սեբաստիան անվանվել է Նոր քաղաք⁷:

Բանաստեղծության շարունակության մեջ ևս Հովասափը, հիշելով Քառասուն մանկանց, գրում է, որ «Աջողութիւն Սուրբ Քառասնու», շնորհիվ որոնց փախցվեց չարը քաղաքի մատույցներից: Միևնույն թեմայով գրված երկու բանաստեղծություններում երիցս Քառասուն մանկանց հիշատակելը վկայում է, թե ինչ կարևորություն է տվել Հովասափը սրբերի բարեխոսությանը ապալիմելուն:

Թուրք-պարսկական հակամարտությունների այս շրջանին է վերաբերում և Խոջա Կոնկայի 1536 թ. կատարված մահատակությունը: Այն ցնցող տպավորություն է թողել ժամանակակիցների վրա, որի արտահայտությունն են և Հովասափի հետևյալ տողերը.

*Ով որ լսեց զտանջանք սորին՝
Սևաստ ՚ի երկիրն ամեն լացին:*

Այս մահատակության մասին Անանուն Սեբաստացու մահատակության մեջ ասվում է. «Եւ զխոնա Կոնկան բռնեցին, զլեզուն կտրեցին և բերնէն ի ցիցն զարկին վասն Քրիստոսի հաւատոյն»⁸:

Չամչյանն էլ գրում է. «Ի թուին ԶԶԵ մահատակեցաւ ի Սեբաստիա ազնուական ոմն խօնա Ոգջալ»⁹:

Խոջա Կոնկային բռնում են իբրև թե պարսիկների կողմն անցնելու մեղադրանքով և ընդունված կարգով որպէս հանցանքի ներման գին պահանջում են հավատափոխ լինել՝ ասելով.

Թէ ուրացիր զՔրիստոս Որդին...

Խորհրդանշական է խոջա Կոնկայի տված պատասխանը, որը մեր օրերի համար ևս այնքան արդիական և ուսանելի է.

Սէրն Յիսուսի ծաղկէր հոգին,

⁶ Վ. Գ-որգյան, Հովասափ Սեբաստացի, էջ 85:

⁷ Նույն տեղում, էջ 211:

⁸ Վ. Նակոբջան, Մանր ժամանակագրություններ, հր. Ա. Երևան, 1951, էջ 170:

⁹ Մ. Չամչյան, Պարմութիւն հայոց, հր. Գ, էջ 516:

*Անվեհեր տայր պատասխանին,
Թէ. Ես գՔրիստոս խոստովանիմ՝
Սուրբ հաւատով Լուսաւորչիմ¹⁰:*

Այսպիսով, ինչպես երանելի այս մահատակն է ասում, հայ մարդը ի Քրիստոս խոստովանելու է Լուսավորչի հավատքի՝ Հայոց Եկեղեցու միջոցով:

Խոջա Կոկնայի կրած չարչարանքները Հովասափը համեմատում է Պետրոս առաքյալի և Սուրբ Ստեփաննոս Նախավկայի կրած չարչարանքների հետ, որովհետև գլխավայր ցից են հանում, ինչպես առաքյալին գլխավայր խաչեցին և քարկոծեցին, ինչպես Սուրբ Ստեփաննոսին քարկոծեցին:

Քանի որ Սեբաստիայի գլխավոր բարեխոսը Քառասուն մանուկներն էին, ուստի և նրանց հետ է կապում և մահատակությանը հաջորդած հրաշքը.

*Տարան զմարմինն հանկուցին,
Հետ Քառասնիցն նշխարին,
Ծառագեց մէջ գիշերին
Լոյսն ի վերայ գերեզմանին:*

Եվ այս լույսը դառնում է մխիթարություն քրիստոնյաների համար և նախատինք՝ անհավատների համար.

*Զոր անարէնք զլոյսն տեսին
Եւ փոշըման վայր մնացին,
Եւ քրիստոնէայքն մխիթարին,
Աւրհնեն զՀայր և զԻւր Որդին¹¹:*

Անհրաժեշտ է նշել, որ Հովասափը գրել է մահ այս մահատակության արձակ տարբերակը, որպես հայամավորքային վկայաբանություն: Համաման ձևով մահ գրել և վերաշարադրել է ևս չորս վկայաբանություն և այս հինգն էլ ի մի հավաքել իր ինքնագիր ձեռագրում¹², որտեղ ի մի են բերված նրա բոլոր ստեղծագործությունները:

Հայկական վկայաբանությունները ավանդաբար և հատկապես մոր վկաները, խորհրդանշելով հավատքի անասանությունը, միաժամանակ դառնում էին հայրենասիրության օրինակ, քանի որ քրիստոնեությունը անխզելիորեն միաշաղախված է մեր ժողովրդի ինքնությանը: Նահատակները մահ կենդանի օրինակներ էին իրենց ինքնությունը չուրանալու և օտար իշխողներին չենթարկվելու:

Ժամանակի տարբեր իրադարձություններին են մվիրված մահ Հովասափի մի քանի ներբողները, որոնցից մեկը մվիրված է Խոջա Խտրին: Վերջինս այն անձնավորությունն է, ում պատվերով Տ. Թադեոս քահանան սկսել էր գրել մի «Յայսմաւորք», որն այնուհետև

¹⁰ Վ. Գ—որգյան, Հովասափ Սեբաստացի, էջ 103:

¹¹ Նույն տեղում, էջ 105:

¹² Նույն տեղում, էջ 182-184:

տև 1543 թ. ավարտելու էր Հովասափը: Ահա այս Հայամավորքի վերջում մա զետեղում է պատվիրատուին ուղղված հետևյալ հիշատակարանաման մերբողյանը՝ բարձր գնահատելով նրա մարդկային արժանիքները և մտավոր պատրաստվածությունը՝ իր խոսքը բարձրացնելով որոշակի հասարակական հնչեղության և ընդհանրացման աստիճանի¹³: Ինչպես գրում է Աշ. Հովհաննիսյանը, «Խըղըրի մեջ Հովասափը անձնավորում է արևմտահայ միջավայրում դիրք ստացած խոջաների իդեալական տիպարը: XV-XVI դարերից ի վեր այստեղ խոջաները մշվում էին որպես ազդեցիկ հայ ունեներ ու տաճարներ, եկեղեցու և վանքի վերամոտոզողներ ու մվիրատուներ, գրչագրերի պատվիրատուներ և այլն: Իրենց ձեռքն առնելով հանրային գործերի ղեկը՝ հաճախ նրանք մեծարվում են որպես «խնամակալք ընդդեմ այլազգեաց»: Հավանորեն նրանց մեջ կային այնպիսիները, որոնք իրոք անդրադառնում էին եկեղեցու և ժողովրդի մվաստացած վիճակին և երազում նրանց բարվոք ապագան»¹⁴:

Հովասափը իր հիշատակարաններից մեկում խոջա Խտրի մասին մաս գրում է. «Զի էր Աստուածատուր պատրիարքն Կոստանդնուպոլսի, որ էր քեոորդի խոջայ Խտրի»¹⁵: Այսպիսով, խոջա Խտրը առանձնակի դիրք է ստանում լինելով Կ. Պոլսո Աստվածատուր պատրիարքի քրոջ որդին:

Հովասափը ներբողական մի բանաստեղծություն է մվիրել մաս մեկ այլ խոջայի՝ Թմրին: Հովասափի ձեռագրում այս անունը բերված է հապավված Թմր ձևով, ուստի, ինչպես գրում է Հովսեփյանը, դժվար է ասել, որն է այս անվան ուղիղ ձևը¹⁶: Այն կարող է լինել և՛ Թամուր, և՛ Թեմուր: Բանաստեղծության սկզբում Հովասափն ասում է.

*Յայտնի եղև սէրն ի լման
Յաւարտ թխտիս, զոր գրեցան:*

Այս խոսքերից երևում է, որ Հովասափը միայն ներբողյան չէ, որ գրել է, այլ մի մամակ, որին կցել է այս չափածոն: Այս հանգամանքն էլ վկայում է, որ մա կապ և գրագրություն է ունեցել մաս մեկ այլ խոջայի հետ: Հովսեփյանը ենթադրում է, որ այս բանաստեղծությունը պետք է գրված լինի 1548 թ. հետո, քանի որ Հովասափի ինքնագրում զետեղված է մինչև 1548 թ. գրված բանաստեղծություններից հետո¹⁷:

Հովասափը մաս մի ներբող է մվիրել Սինաս Թոխաթցուն, որում վերջինս դրվատվում և որպես հոգևորական այսպես է ներկայացվում.

*Վառեալ սիրովն ես Քրիստոսի,
Ժամու պաշտման անձանձրալի,
Դետ և հովիւ քաջ և արի,*

¹³ Նույնը, էջ 205:

¹⁴ Ա. Հովհաննիսյան, Դավագներ հայ ազգաբազրական մորքի պատմության, Երևան, 1959, հր. Բ, էջ 38:

¹⁵ Վ. Գորգյան, Հովասափ Սեբաստացի, էջ 33:

¹⁶ Տե՛ս Գ. Հովսեփյան, Յովասափ Սեբաստացի, էջ 237:

¹⁷ Նույն պեղում:

Հմուտ գրող ամենայնի¹⁸:

Ինչպես գրում է Գ. Հովսեփյանը, այս շրջանից հայտնի են երկու Մինաս Թոխաթցի: Առաջինը տաղասաց Մինաս դպիր Թոխաթցին է, և երկրորդը՝ 1536-1560 թթ. Սեբաստիայի առաջնորդ եղած Մինաս արքեպիսկոպոսը: Քանի որ Հովասափի ներքողյանը բարձրաստիճան հոգևորականի է ուղղված, ինչպես որ իսկ երևում է վերը բերված քառատողից, ուստի Հովսեփյանը գտնում է, որ այս ստեղծագործությունը նվիրված է Սեբաստիայի առաջնորդին, մանավանդ որ Հովասափը ինքն էլ Սեբաստիայից էր:

Հովասափը նաև մի ներքող է նվիրել իր եղբորը, որը վախճանվել է 32 տարեկանում: Բանաստեղծը գրում է, որ իր սիրտն այրվում է, որովհետև իր եղբայրը Աստծո հրամանով զնաց այս աշխարհից: Ներքին այս բողոքը, սակայն, այնուհետև աստվածային փառաբանության է փոխվում հետևյալ քառատնում.

*Փառք տանք Աստուծոյ փառացն
Բերանալք յարժանաւորնուն,
Յերես անկեալ աղաչեմք
ԶՏէր Աստուած ստեղծող ամենուն¹⁹:*

Ժամանակի հասարակական կյանքի անցուդարձն է ներկայացնում և Հովասափի՝ մեզ հայտնի միակ երգիծական բանաստեղծությունը, որի սկզբում ասվում է.

*Ասեմ՝ զաշրիս այն կտրճներն
Եւ սիրոյ տէր գինեխմերն.
Թւերն ի ռաց, կուրցն է ճեղքեր,
Մէջ պաղչախն ուրախացեր²⁰:*

Նման կտրիճների համար ասվում է, որ նրանք ողջ տարին անցկացնում են գինեխմությամբ և երբ գալիս է ձմեռը, դժվարին կացության մեջ են ընկնում և սպասում զարման գալուն:

Նկատի ունենալով Հովասափի Սեբաստացու այս կապերը ժամանակի խոջաների ու հոգևոր նշանակալից դիրք ունեցող գործիչների հետ՝ Վ. Գևորգյանը այն միտքն է հայտնում, որ նա սերտորեն կապված է եղել Սեբաստիայում խմորվող ազատագրական գաղափարների հետ: Ինչպես ինքն է գրում. «Հովասափի Սեբաստացու այդ ուղղակի կապերը Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերի աչքի ընկնող գործիչների հետ հիմք են տալիս ենթադրելու, որ նա հեռու չի եղել այդ միջավայրում արծարծվող ազատագրական գաղափարներից: XVI դարի 40-50-ական թվականներին բուն Սեբաստիայում նման գաղափարներով տոգորված լայն գործունեության կոնկրետ փաստեր հայտնի չեն: Սակայն, արդեն 60-ական թվականներին նկատվող որոշակի խմորումները անմիջապես կապվում

¹⁸ Վ. Գևորգյան, Հովասափի Սեբաստացի, էջ 118:

¹⁹ Վ. Գևորգյան, Հովասափի Սեբաստացի, էջ 116:

²⁰ Նույն տեղում, էջ 122:

են Սեբաստիայի հետ: Հիշենք թեկուզ մշանավոր խորհրդածողովը՝ Միքայել Սեբաստացու զլխավորությամբ, որը հրավիրվեց Սեբաստիայում 1562 թվականին: Չի կարելի կասկածել, թե Հովասափը կանգնած էր Միքայել Սեբաստացու, Աբգար Թոխաթեցու և մյուս գործիչների ու մեծատունների դիրքերում և նրանց հրահրած շարժումը իր կնիքն էր դնում նաև նրա ստեղծագործության վրա»²¹:

«Ոտանաւոր վասն անփոփոխ եղանակաց» տոմարական բնույթի չափածո ստեղծագործության վերջի հիշատակարանային քառատողում Հովասափը գրում է.

*Ընկա՛լ, մեծ իմաստուն, քոյն աստիճանէ,
Ստեփանո՛ս գովելի յամէն բերանէ,
Ամենդադիր եղիր, անյարմար բան է,
Ըստ քոյն իմաստութեանդ մոր մորոգէ*²²:

Այս ժամանակաշրջանում Ստեփաննոս անունով երկու մշանավոր հոգևորականներ են եղել, որոնց կարող էր ուղղված լինել մամն մեծարանքը: Առաջինը ժամանակի Ամենայն Հայոց կաթողիկոս Ստեփաննոս Ա, Սալմաստեցին է (կթղ.՝ 1545-1567թթ.), իսկ երկրորդը՝ Կ. Պոլսի հայոց պատրիարք Ստեփաննոսը (պտր. 1550-1561թթ.): Ամենայն հավանականությամբ, Հովասափը այս տողերը ուղղել է Ստեփաննոս Սալմաստեցուն, որը սերտորեն կապվում է Սեբաստիայի խորհրդածողովի հետ և որը այնուհետև Աբգար դպիր Թոխաթեցուն Հայաստանի ազատագրության խնդրով առաքել է Եվրոպա:

Հովասափը, որ սերտորեն առնչվել է ժամանակի ազատագրական գաղափարների հետ, լավագույնս հավաստում է «Ոտանաւոր վասն տեսլեան տեսոն Ներսէսի» ստեղծագործությունը: Ինչպես հայտնի է, միջնադարում ազատագրական գաղափարները արտահայտվում էին հատկապես տեսիլների միջոցով: Տեսիլի միջոցով Հայաստանի ապագան ներկայացնելը այնքան ընդհանրացած և կենսունակ ըմբռնում էր, որ անգամ մոր շրջանի գրականությունում Ռաֆֆին իր երազած և զինական պալքարի միջոցով ազատագրվելիք Հայաստանի իր ըմբռնումը ներկայացրեց Խենթի երազի միջոցով, որը ևս տեսիլային գրականության ավանդների շարունակությունն էր մոր շրջանի գրականության մեջ:

Ներսես Մեծի տեսիլը կապվել է նաև վախճանաբանական ըմբռնումների հետ, և հայ վախճանաբանական գրականության գործերի զգալի մասը գրական տարբեր անդրադարձներն են այս տեսիլի: Նույնը վերաբերում է և Հովասափի այս գործին: Ի դեպ, այս գործի գրության ժամանակն իսկ ուղղակիորեն հարաբերվում է վախճանաբանական սպասումների հետ: Ինչպես հայտնի է, միջնադարում ակնկալվում էր, որ աշխարհի կործանումը լինելու է 1000 թվականին, և այս թվականին մահտորդող սպասումները իրենց արտացոլումն են գտել ժամանակի գրականության մեջ, այդ թվում և հայ գրականության, որի արտահայտություններից է և Գրիգոր Նարեկացու Աղոթամատյանը: Այս սպասումների արտահայտությունը եղող գրականությունը անվանվել է նաև հազարամյայի վարդապետություն: Նույն այս ըմբռնմամբ էր պայմանավորված անգամ եկեղեցաշինության

²¹ Վ. Գորգյան, Հովասափ Սեբաստացի, էջ 33-34:

²² Ձեռ. հմր. 805 (Բեռլին), թերթ 311ա:

յուրօրինակ վերելքը 666 և 1000 թվականներից առաջ, որոնք համարվում էին Նեոի հավանական գալստյան տարեթվեր: Հատկանշական է, որ 1000 թվականին մախորդող տասնամյակներին կառուցված մի շարք եկեղեցիների վիմագիր արձանագրություններում պատվիրվում է այդ եկեղեցիներում անխափան պատարագ մատուցել «մինչև ի կատարածս աշխարհի»: Անշուշտ, այդ եկեղեցիները կառուցողները չեն մտածել, որ այս տաճարները տևականորեն կանգուն են լինելու, այլ սպասել են 1000 թվականին՝ ենթադրելով, որ այն լինելու է **Կատարածի** տարին և իրենց իսկ կառուցած եկեղեցիներն էլ ինչ-որ ձևով մասնակից են դառնալու մղվելիք հոգևոր պատերազմին:

Մեսրոպ Վալոցձորեցու միջոցով վկայված Ներսես Մեծի պատմության, ինչպես նաև վերջինիս հիման վրա գրված Ագաթոնի և Կոզեռնի տեսիլներում նաև ասվում է, որ Նեոի գալստյանը մախորդելու է Հայաստանի ազատագրությունը, որով վախճանաբանական ըմբռնումներն իսկ սկսվում են կապվել Հայաստանի ազատագրության հետ:

Հովասափի ապրած ժամանակաշրջանում առկա էին այս երկու գործոնները՝ թե՛ ազատագրական գաղափարները և թե՛ վախճանաբանական սպասումները, որոնք կապվում էին 1551 թ. հետ հետևյալ պատճառով: Ինչպես որ 1000 թվականի համար էր սպասվում որպես սկիզբը կատարածի, այնպես էլ այս ըմբռնումը հայկական միջավայրում կապվում է նաև 1551 թվականի հետ, քանի որ հայոց թվականին՝ 551 թ., որպես ժամանակագրական համակարգի սկիզբ եթե գումարենք 1000, ապա կստացվի 1551 թվականը: Եվ հայ ազատագրական գաղափարների ձևավորման կենտրոն հանդիսացող Սեբաստիայում 1540-ական թթ. առաջին կեսին գրված այս ստեղծագործությունը կրկնակիորեն էր կապվում Ներսես Մեծի տեսիլի հետ:

Ներսես Մեծի տեսիլի բուն գրական սկզբնաղբյուրը Փավստոս Բուզանդի պատմությունն է, որում ասվում է, թե երբ Պապ թագավորը նենգությամբ թունավորել է տալիս Հայոց քահանայապետին, վերջինս մինչ վախճանվելը ասում է. «Եւ կործանումն՝ որ բերանով մարգարէին ածի ի վերա ձեր, ըմպել ազգիդ Արշակունեաց գլետին քաժակն, արբջիք, արբեսջիք և կործանեսջիք, և այլևս մի կանգնեսջիք»²³:

Ղազար Փարպեցին հիշատակում է Փավստոսի միջոցով վկայված այս խոսքերը՝ ասելով, թե այս անեծքով Հայոց աշխարհից վերացավ Արշակունյաց թագավորությունը²⁴:

Փարպեցու Պատմությունում այս թեման կապվում է նաև Ս. Սահակի տեսիլի հետ: Պատմիչը գրում է, որ քահանայապետը տակավին իր սարկավագության շրջանում վաղարշապատում տեսնում է մի տեսիլ, որի մեկնության Տիրոջ հրեշտակի խոսքում ասվում է. «Տեսանող ականբ ի զօրութենէ Սուրբ Հոգւոյն տեսանէր այրն Աստուծոյ ի սպառ ի սպառ զկործանումն աշխարհիս Հայոց»²⁵:

Ս. Սահակի տեսիլում նաև արդեն ուղղակիորեն արտահայտվում է այն գաղափարը, որ Արշակունյաց թագավորությունը և Լուսավորչի տոհմի քահանայապետությունը վերստին նորոգվելու են Նեոի գալուց առաջ, ինչպես Փարպեցին է գրում. «Մերձ երևումն

²³ Փավստոս Բուզանդ, Պարմոնիսն հայոց, Վենետիկ, 1832, էջ 15:

²⁴ Ղազար Փարպեցի, Պարմոնիսն հայոց, Թիֆլիս, 1907, աշխարհ. Գ. Տեր-Մկրտչյանի, էջ 46, 57:

²⁵ Նույն տեղում, էջ 41:

պղծոյն անապատիս»²⁶:

Այս ըմբռնումը իր առաջին ամբողջական և ամփոփ արտահայտությունն է գտնում Մեսրոպ Վայցձորեցու կողմից 967 թ. գրված «Պատմութիւն Սրբոյ Ներսիսի Հայոց Հայրապետի» պատմական գործում:

Բուզանդի, Փարպեցու և իրեն նախորդող շրջանի տարբեր աղբյուրների ու իր ժամանակ ձևավորված ըմբռնումների հիման վրա Վայցձորեցին գրում է, որ Ս. Ներսեսը վախճանվելուց առաջ ասում է. «Բայց լետ լնոյ յիսուն ամաց՝ բարձցի քահանայութիւն յազգէս մերմէ, որ է սրբոյ նախնոյն իմոյ Գրիգորի, ընդ նմին և թագաւորութիւնդ յազգէդ Արշակունեաց, մինչև ի մերձեմալ պղծոյն անապատիս»²⁷:

Այնուհետև ասվում է, թե ինչպես է հայոց ազգը իր գործած մեղքերի համար ընկնելու օտարների ծառայության մեջ, թե ինչպես ամայանալու են երկիրը և սրբատեղիները: Երեմիայի Ողբի հետևողությամբ Վայցձորեցին գրում է, թե այդ ժամանակ մարդիկ ասելու են «լերանց թէ անկերութ ի վերայ մեր, և բլրոց՝ թէ ծածկեցէք զմեզ»²⁸ (հմմտ. Ղուկ. ԻԳ. 30):

Սակայն հետո խաղաղվելու է երկիրը և լինելու է «Փրկութիւն ամենայն աշխարհաց քրիստոնէից» և մարդիկ արդեն ափսոսալու են վախճանվածների համար, որ նրանք չեն տեսնելու այդ ամենը: Ինչպես Վայցձորեցին է գրում. «Եւ մարդիկ աւաղեսցեն զանցեալսն և զոչ հանդիպեալն այնմ բարեաց»²⁹: Այնուհետև սակայն, գալու է Նեոք, բայց պարտվելու է և հաջորդելու է Տիրոջ Երկրորդ գալուստը:

Ինչպես նշում է Ա. Հովհաննիսյանը, Մեսրոպ Վայցձորեցու այս տեսիլը ևս մի քանի խմբագրությունների է ենթարկվել, որոնցում արտահայտվել են նաև 10-րդ դարին հաջորդող պատմական իրադարձությունները, որոնք հարաբերվելով Ներսես Մեծի այս տեսիլի հետ, պատմական յուրաքանչյուր որոշակի ժամանակաշրջանի ազատագրական մտքի ու ըմբռնումների և վախճանաբանական ըմբռնումների հետ ծնունդ են տվել նման նոր ստեղծագործությունների, որոնցից ամենատարածվածն էին Ազադրոնի և Կոզեռնի տեսիլները³⁰:

Ազադրոնի տեսիլի մասին Հ. Անասյանը գրում է. «Հայ մատենագրության մեջ այս անունով կա մի մարգարեական գրվածք, որը խոսում է հոռմայեցիների կամ ֆրանկների ձեռքով «նետողների ազգի» կործանման ու ամբողջ աշխարհի փրկության և նրանց օգնությամբ հայոց թագավորության վերականգնման մասին, ինչպես նաև Նեոքի հայտնվելու և վերջապես Քրիստոսի Երկրորդ գալուստյան մասին, որ է աշխարհի վերջը: Այս մարգարեությունը գոյություն ունի դեռևս ԺԳ դարի սկզբում, եթե ոչ ավելի վաղ»³¹:

Ազադրոնի պատմությունը լսել և իր Ուղեգրությունում վերաշարադրված բերել է 13-րդ դարի ֆրանցիսկյան միաբանության անդամ Ուիլիամ Ռուբրուքը:

²⁶ Նույն տեղում, էջ 40:

²⁷ Սուփերք Նայկականք, Վենեպիկ, 1853, գիրք Զ, էջ 89:

²⁸ Նույն տեղում, էջ 92:

²⁹ Նույն տեղում, էջ 93:

³⁰ Տե՛ս Ա. **Հովհաննիսյան**, «Դավազներ հայ ազատագրական մրցի պայքարյան» գործի 1-ին հատրթի «Ներսես Պարթևի տեսիլը» և «Ազադրոն և Կոզեռն» գլուխները, Երևան, 1957, էջ 13-32, 33-57:

³¹ Հ. **Անասյան**, Նայկական մարենագիություն, հր. Ա, Երևան, 1959, էջ 144-145:

Ներսես Մեծի այս տեսիլը թե որքան տարածված և ընդունված է եղել Հայաստանում, վկայում են Ռուբրուկի հետևյալ խոսքերը. «Ամբողջ Հայաստանում պատմում էին այս մարգարեությունը այնքան վստահ, որքան Ավետարանի մասին»³²:

Հատկանշական է, որ Հովասափին ոչ միայն ծանոթ է եղել Ագադրոնի պատմությունը, այլև այն մա ընդօրինակել է իր ինքնագիր ձեռագրում³³: Այստեղ Ագադրոնի տեսիլից հետո մա գետեղել է իր հեղինակած «Վասն հանդերձեալ դատաստանին» գործը, որն ունի հետևյալ սկսվածքը. «Արարչագործն Աստուած ստեղծող համայնին»³⁴: Պատահական չէ, որ վախճանաբանական բնույթի իր այս ստեղծագործությունը մա գետեղել է Ագադրոնի հիշյալ Տեսիլքից հետո, որով մերքին մի կապակցություն է ստեղծվել այս երկու ստեղծագործությունների միջև:

Այժմ տեսնենք, թե Ներսես Մեծի տեսիլում մկարագրվածը ինչպես է բանաստեղծական չափածոյով մերկայացրել Հովասափը:

Հայ միջնադարյան ընդունված պատմահայեցողությամբ Վայոցձորեցին գրում է, որ Հայաստանի անկման պատճառը հայ իշխանների անմիաբանությունն է եղել, որի պատճառով էլ կործանվել է երկիրը: Հովասափը սակայն շեշտում է ոչ թե հայերի անմիաբան լինելը, այլ թշնամիների միաբանությունը՝ դրանով միասնության կոչելով հայ ժողովրդին:

*Թշնամիք զօրասցեն, լինին միաբան,
Աւերեցեն զաշխարհ ամէն հայկազան,
Չտաճար սուրբ քակեցեն, արասցեն կոխան
Եւ սրբութիւն մոցա առցեն յաւաբան:*

Ուղղակիորեն հենց հայ ժողովրդին ի մկատի ունենալով, որը 11-րդ դարից սկսել էր բռնել գաղթականության ճանապարհը, Հովասափն ասում է.

*Սրտաբեկ լիցին ազգ քրիստոնեական,
Թողեալ զտունս իւրեանց՝ շրջին փախըստեան*³⁵:

Տեսիլում գերության այս շրջանի համար եթե Երեմիայի մարգարեության խոսքերի հետևողությամբ ասվում էր, թե այնպիսի ծանր վիճակ է լինելու, որ մարդիկ ասելու են, թե ավելի լավ կլիներ, որ լեռները ընկնեին մեր վրա և բլուրները մեզ ծածկեին, ապա երբ հոռմեական գորքերը գան և ազատեն քրիստոնյաներին, արդեն լիության և խաղաղության այնպիսի շրջան է լինելու, որ մարդիկ ափսոսալու են մնջեցյալների համար, ովքեր չտեսան այս ամենը. «...եւ մարդիկ աւաղեսցեն զանցեալսն և զոչ հանդիպեալսն այնմ բարեաց»³⁶:

³² Նովի. Վակոբյան, Ուղեգրություններ, հր. Ա. ԺԴ-ԺԶ դդ., Երևան, 1933, էջ 17:

³³ Տե՛ս ձեռ. հմբ. 805 (Բեռլին), թերթ՝ 256ա-264ա:

³⁴ Նույն տեղում, թերթ՝ 264ա-265ա:

³⁵ Նույն տեղում, տե՛ս նաև Վ. Գ-որգյան, Նովասափ Մեթափրացի, էջ 97:

³⁶ Մեսրոպ Վայոցձորեցի, Պատմություն..., էջ 92-93:

Խաղաղության հաստատվելիք այս շրջանի համար Հովասափը բառացիորեն մույն ձևով գրում է.

*Հանցեղ, որ մեռելոց երթան և վայ տան,
Թէ չէք հասել ըստի յայս ժամանակեան...³⁷:*

Գտնում ենք մաս պատկերային ընդհանրություններ: Վայոցձորեցին գրում է, որ Նեոի դեմ պայքարում «Յօլանան մասունք ամենայաղթ մշանին»³⁸: Նույն ձևով Հովասափն է գրում.

Յայնժամ հուր ցոլանայ կերպ խաչայման...

Այս բոլոր ընդհանրություններով հանդերձ, մի էական տարբերություն կա Վայոցձորեցու Պատմության և Հովասափի այս ստեղծագործության միջև: Եթե Ներսես Մեծի տեսիլում անհամեմատ ավելի ծավալուն տեղ է գրավում վախճանաբանական մասը, ապա Հովասափի մոտ վեջինիս նախորդող այն հատվածը, որ նկարագրվում է քրիստոնյաների, ըստ այդմ և հայ ժողովրդի ազատագրությունը: Այս հանգամանքը պայմանավորված էր հետևյալ պատճառով: Ներսես Մեծի տեսիլը իր վերջնական խմբագրությանն է հասել խաչակրաց արշավանքների ժամանակ և այնտեղ ընդհանուր ձևով ակնարկվում է Երուսաղեմի՝ խաչակիրների կողմից գրավելու մասին և այս շրջանում դեռևս չէր ձևավորվել խաչակրաց և հաջորդող շրջանի այն ակնկալիքը, թե արևմտյան քրիստոնեությունը ներկայացնող ուժերը գալու և ազատելու են Արևելքի քրիստոնյաներին: Հովասափի ժամանակ սա արդեն ընդհանրացած ըմբռնում էր, որի համար էլ մա այնքան մեծ խանդավառությամբ է նկարագրում Հայաստանի ազատագրությունը եկող քրիստոնյաների միջոցով: Այս հանգամանքը ևս վկայում է, որ հայ միջնադարյան մատենագրության մեջ վախճանաբանական ըմբռնումները սերտորեն միահյուսված էին ազատագրական ըմբռնումներին:

Հովասափի այս ստեղծագործության նպատակը մույն այս շարժառիթով է բացատրում Գարեգին Հովսեփյանը՝ գրելով, որ այն «ոչ այլ ինչ է, բայց եթե սուրբի անուան հետ կապում լայտնի անվաներականի համառոտ բովանդակությունը, մեր միջնադարեան մատենագիրների և բանաստեղծների սիրելի միջոցից մեկը, որ հոլուում է մրանց գրուածքների մեջ՝ այլևայլ եղանակաւորութիւններով և դորանով վառ է պահուել հայ ժողովրդի հոգևոր և քաղաքական ազատութեան տենչանքները»³⁹:

Թե՛ ժամանակային և թե՛ թեմատիկ առումով Ներսես Մեծի տեսիլին մվիրված բանաստեղծության հետ սերտորեն առնչվում են Հովասափի՝ Մուշեղ Մամիկոնյանին մվիրված երկու բանաստեղծությունները:

Ավելին, այս երկու բանաստեղծությունների գրությունն իսկ Հովասափի գրական նախասիրություններից բացի պայմանավորված էր մաս Ներսես Մեծի տեսիլով, քանի որ իր

³⁷ Վ. Գորգյան, Հովասափ Մեքսուրացի, էջ 99:

³⁸ Մեսրոպ Վայոցձորեցի, Պատմություն..., էջ 100:

³⁹ «Արարար», 1918, էջ 236:

ինքնագիր ձեռագրի (Բեռլին 805) 200թ-222ա էջերում Հովասափը համառոտ վերաշարադրանքով ներկայացրել է Մեսրոպ Վաղոցադորեցու հիշյալ ստեղծագործության համառոտ վերաշարադրանքը հետևյալ խորագրի ներքո՝ «Յաղագս զարմից Սրբոյն Գրիգորի Լուսաորչին և Ներսէսի և թագաւորին Տրդատայ»: Ինչպէս կտեսնենք «Ալեքսանդրի պատմության» իր ընդօրինակությունը Հովասափը ընդմիջարկել է կաճաներով: Համամաման ձևով Վաղոցադորեցու գործի համառոտած այս վերաշարադրանքում բերել է Մուշեղ Մամիկոնյանին նվիրված այս երկու ստեղծագործությունները: Դրանցից առաջինը՝ «Արհմեալ անուն արարչական» սկսվածքով, զետեղել է Վաղոցադորեցու պատմության «Եւ Սմպատ Սահառունի էհան զսուրն պողովատիկ և անց ընդ փողսն Մուշեղա. և այնպէս աւանտեաց զհոգին իւր առ Աստուած և զմարմինն տարան ի Տարաւն և եղին ի վանս Գլակայ» նախադասությունից հետո⁴⁰:

Ահա այս պատճառով այն ուղղակիորեն վերաբերում է Մուշեղ Մամիկոնյանի կատարած քաջագործություններին և դավանաաբար սպանվելուն, որին և վերաբերում էր Պատմության այն նախադասությունը, որից հետո, ինչպէս ասացինք, զետեղված էր այս բանաստեղծությունը: Երկրորդը, նվիրված լինելով հանդերձ Մուշեղ Մամիկոնյանին, զտնվում է Վաղոցադորեցու Պատմության վերջում, որով այն արդեն վերաբերում է ոչ թե Մուշեղ Մամիկոնյանին, այլ ողջ պատմությանը, որի համար թեմատիկ առավել մեծ ընդգրկում ունի: Եվ ինչպէս Ներսէս Մեծի տեսիլում ասվում է Արշակունյաց թագավորության մոտալուտ անկման մասին, այնպէս էլ այս ստեղծագործության մեջ արդեն ոչ թե Մուշեղ Մամիկոնյանի մահն է սգում Հովասափ Սեբաստացին, այլ Արշակունյաց թագավորության անկումը, ինչպէս որ բանաստեղծության առաջին տան մեջ է ասվում.

*Սո՛ւգ աշխարհի Հայոց Մեծին,
Իւրեանք եղեն պատճառ չարին,
Անհնազանտ միմեանց լինին,
Չաշխարհ հայոց աւերեցին*⁴¹:

Ինչպէս Ներսէս Մեծի տեսիլի, այնպէս էլ Մուշեղ Մամիկոնյանի կյանքի և դավանաաբար սպանվելու պատմական առաջին սկզբնաղբյուրը Փավստոս Բուզանդի «Հայոց Պատմությունն» է: Հովասափի՝ Մուշեղ Մամիկոնյանին նվիրված երկու ստեղծագործություններում հայոց քաջարի այս սպարապետը ավելի լայն պատմական համապատկերում և գործողությունների շրջանակում է ներկայացված, քան Վաղոցադորեցու Պատմության մեջ է նա հիշվում, որից կարելի է եզրակացնել, որ Հովասափը կարդացել և ազդվել է նաև Բուզանդից, սակայն քանի որ այս երկու գործերը նա գրել է որպէս Վաղոցադորեցու Պատմության համառոտությանը կից բանաստեղծություններ, ուստի դրանք առավելագույնս է հարմարեցրել հիշյալ հեղինակի այդ գործին:

Ինչպէս արդեն ներածության մեջ նշել ենք, Գ. Հովսեփյանը գրում է, որ Հովասափը Մուշեղ Մամիկոնյանին ներկայացնում է ժողովրդական վիպական գույներով: Նա հայոց

⁴⁰ Նմմր. «Սուփերք», Զ, էջ 119:

⁴¹ Վ. Գ—որգյան, Հովասափ Սեբաստացի, էջ 89:

սպարապետին համեմատում է առյուծի հետ և այս համեմատության վրա հիմնում իր կառուցած բանաստեղծական բոլոր պատկերները.

*Էր քաջասիրտ յառիժ մման
Որ ի յահէն աշխարհ դողան:*

Զարգացնելով այս պատկերը՝ հաջորդ տան մեջ ասում է.

*Էր ահրնկեց զազան մըման,
Որ պատառէր մարդ և ձիան:*

Փափստոս Բուզանդը և մրա հետևողությամբ Վայոցձորեցին գրում են, որ երբ Պապը գալիս է բյուզանդական բանակի աջակցությամբ թագավորելու Հայաստանում, Պարսից զորքերի հետ տեղի ունեցած ճակատամարտում Մուշեղը այնքան է խորանում դեպ թշնամու բանակը, որ անգամ թվում է, թե մա հակառակորդի կողմն է անցել: Պատերազմի այս դրվագը ևս Հովասափը ներկայացնում է որպես առյուծի հաղթական ընթացք.

*Չմնաց զարացն հայկազան,
Կտրեց, գնաց յառիժ մըման:*

Հովասափն այնուհետև բանաստեղծորեն ներկայացնում է Զիրավի ճակատամարտի մյուս դրվագները և վերջում ցավով նշում, թե ինչպես անարգաբար սպանեցին մրան:

Ինչպես ասացինք, եթե այս մի բանաստեղծությունը ուղղակիորեն վերաբերում էր Մուշեղ Մամիկոնյանին, ապա մյուսը, որը թեև վերստին մրան նվիրված, սակայն դրված լինելով Վայոցձորեցու պատմության վերջում, արդեն ներկայացնում է ողջ Արշակունյաց Հայաստանը:

Արշակունյաց Հայաստանի այս ժամանակաշրջանը կապելով Մուշեղ Մամիկոնյանի քաջագործությունների հետ՝ Հովասափը գրում է.

*Ջի ի սոցայ ժամանակին
Մուրող մարդ ոչ գտանէին,
Ամենեքեան ուրախ կային
Քաջն՝ պարիսպ ամենին⁴²:*

Մուշեղ Մամիկոնյանի միջոցով Հովասափը ընդհանրացված ձևով ներկայացնում է ողջ Մամիկոնյան տոհմին: Փափստոս Բուզանդը Վասակ Մամիկոնյանի մասին, որը Արշակ Երկրորդի հետ Տիգրոն էր գնացել, գրում է, թե Վասակն ասում է, որ Բյուզանդական կայսրությունը և Սասանյան Պարսկաստանը իր համար երկու լեռներ էին, որոնց վրա կանգնած էր ինքը և երբ հեռվում էր այդ լեռներից յուրաքանչյուրի վրա, այսինքն պատե-

⁴² Նույն տեղում, էջ 89-90:

րազմում դրանց դեմ, այդ մի բլուրը վայր էր իջնում և հարթանում⁴³: Բուզանդի՝ Վասակ Մամիկոնյանին վերաբերվող այս տողերը Հովասափը կապել է Մուշեղ Մամիկոնյանի հետ՝ գրելով.

*Պարիսպ և ըլուրք հարթ լինէին՝
Յահէ իշխան քաջ Մուշեղիս*⁴⁴:

Եթե նախորդ բանաստեղծության մեջ Մուշեղի ժողովրդական-վիպական պատկերումը արտահայտվում էր նրան առյուծի հետ համեմատելով, ապա այստեղ այն արտահայտվում է նրա ձիու գրեթե էպոսային մոտիվի կերպավորմամբ.

Երր որ հեծնոյր յիւր ահեղ ձին...

կամ

*Ձին էր սպիտակ, ահեղագին,
Սմպակ՝ մման ուշկապարին.
Տեսողքն յահէն մեռանէին,
Ձի պատառող էր գազանին*⁴⁵:

Ինչպես արդեն ասացինք, Հովասափը նկարագրող էլ է իր ընդօրինակած ձեռագրերը և հատկապես Բեռլինի հմր 805 ինքնագիրը, ուր Մուշեղ Մամիկոնյանին նվիրված բանաստեղծություններին կից բերել է նաև Ջիրավի ճակատամարտը ներկայացնող երեք մանրանկար և այս մանրանկարները գտնվում են տվյալ տողերի կողքին: Այսպես, Մուշեղ Մամիկոնյանը սրով ասես գերանդիով հնձում է դիմացի ձիավորներին, և պատկերված է այն պահը, երբ սուրը ուր որ է պետք է կտրի մյուս հեծյալների գլուխները, իսկ ներքևում ընկած են «հնձված» զինվորներն ու ձիերը, և այս մանրանկարի կողքին գրված է. «Եւ հնձէր զպարսիկսն և առհասարակ ընդ որ գնաց»⁴⁶: Այս մակագրությունն արվել է համաձայն Հովասափի «հնձեն զպարսիկք զետ զարտորայն» տողի:

Հովասափը հոր մահից հետո շարունակել և ավարտին է հասցրել հոր ընդօրինակել սկսած «Յայսմաւորքը»: Իր ընդօրինակած տարբեր ձեռագրերում և հատկապես Բեռլինի ինքնագիր օրինակում կան նրա վերաշարադրած և համառոտած վարքերն ու վկայաբանությունները, որը ցույց է տալիս նրա առանձնակի սերն ու հետաքրքրությունը սրբախոսական գրականության այս երկու ժանրերի հանդեպ, որն արտահայտվել է ոչ միայն այդ երկու պատմությունները համառոտելով ու վերաշարադրելով, այլև գիտական մշակման ենթարկելով, որի արդյունքում գրվել են Երիցն կույսին ու Հովհաննես կամավոր աղքատին նվիրված վարքերը և Սեբաստիայի քառասուն մանկանց մահատաղության պատ-

⁴³ Տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց Պարմություն, աշխարհ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 261:

⁴⁴ Վ. Գ—որգյան, Հովասափ Մեքասրացի, էջ 90:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Ձեռ. հմր. 805 (Բեռլին), թերթ՝ 210:

մությունը:

Ինչպես հայտնի է, Քառասուն մանկանց մահատակությունը տեղի է ունեցել 306 թ.: Այն կարևոր տեղ է գրավում ընդհանուր քրիստոնեական արքայադատական գրականության մեջ⁴⁷:

«Յայսմաուրքում» նրանց մասին գրված է մարտի 9-ի ներքո: Հովասափի գրածը, սակայն, չափաժողովարարություն լինելու փոխարեն ավելի շատ ներքո է հիշեցնում: Նահատակության բուն պատմությունը այստեղ այնքան է համառոտաժողովարար, որ երբեմն անընկալելի կդառնար, եթե նրանց բուն վկայաբանությունը հայտնի չլիներ: Զարմանալի է, որ Քառասուն մանկանց մասին Հովասափը այսքան համառոտ է գրել, այնինչ այն կրկնակիորեն սիրելի պետք է լիներ նրան, քանի որ Քառասնից մահատակությունը կապվում էր Հովասափի ծննդավայրի՝ Սեբաստիայի հետ, ուր կենդանիորեն պատմվում էին այս մահատակության ժողովրդական մի քանի տարբերակները, ինչպես նաև մի շարք տեղավայրեր կապվում են այս մանկանց անվան հետ, ինչպես օրինակ Սեբաստիայի լճակը, ուր տեղի է ունեցել նրանց մահատակությունը:

Քառասուն մանկանց վկայաբանության մեջ ասվում է, որ նրանք Կապադովկիայից էին՝ Լիկիանոս կայսեր զորաբանակից: Երբ իմացվում է նրանց քրիստոնյա լինելը, պահանջում են ուրանալ և զոհ մատուցել ու պաշտել կուռքերին: Երբ նրանք հրաժարվում են, բանտ են նետվում, ուր և նրանց երևում է Հիսուս և քաջալերում, որ ամուր մնա՞ն իրենց հավատում: Տարբեր չարչարանքներ կրելուց հետո երբ չեն ուրանում, նրանց տանում են Սեբաստիայի լիճը նետում:

Բուն մահատակությանը հաջորդող ողջ այս պատմությունը Հովասափը չի ներկայացնում, այլ նրանց մվիրված «Վասն քառասուն մանկանցն փոքր ի շատէ» ստեղծագործությունը սկսում է այս մահատակությունը ամփոփող հետևյալ տողերով.

*Յիշեմք ըզսքանչելիս մանկանց
Քառասնիցն ի Սեբաստիին,
Որ թողին զպաշտամունք կողոցն
Եւ եղան քաժիւն Փրկչիւն*⁴⁸:

Քառասուն մանկանց լիճը նետվելու պատմությունը որոշակի զուգահեռներ է գծում Երեք մանկանց՝ Նաբուգոդոնոսորի կողմից հնոցը նետվելու պատմության հետ (Դանիել Գ 49-51): Դանիելի մարգարեության մեջ ասվում է, որ «ի մէջ հնոցին իբրև զհողմ որ ցողագին շնչիցէ. եւ ոչ մերձեցայր ամենևին հուրն ի նոսա, ոչ տրտմեցուցանէր և ոչ նեղէր զնոսա» (Դան. Գ 51): Եվ ահա, ինչպես որ երեք մանուկները չայրվեցին հնոցում և աստվածային զորությամբ զովությամբ պատվեցին, այնպես էլ ձմռանը սառած լիճը նետված քառասուն մանուկներն են ջերմությամբ պատվում: Նրանց վկայաբանության «Յայսմաուրքի» տարբերակում ասվում է, որ «ծագեաց ի վերա նոցա արև, որպէս յամարայնի»⁴⁹: Այս

⁴⁷ Այս մասին տե՛ս Մ. Ազեբեան, Լիակապար վարք և վկայաբանությունը սրբոց, հղ. Բ, Վենետիկ, 1811, էջ 482-519:

⁴⁸ Վ. Գ—որգյան, Հովասափ Սեբաստացի, էջ 106:

⁴⁹ «Յայսմաուրք», 9-ը մարտի:

խոսքերի հետևողությամբ Հովասափը գրում է, որ նրանք «ի պաղենալ ջրին... տապեին»⁵⁰:

Երեք մանկանց համար Դանիելի մարգարեության մեջ ասվում է, որ նրանք «օրհնեին և զովեին և փառադր առնեին զԱստուած ի մէջ հնոցին» (Դան. Գ. 51): Նույն ձևով «Բառասնից վկայաբանության մեջ է ասվում. «Ի մէջ լճին օրհնեին զԱստուած»⁵¹: «Յայսմատորքում» ասկայն ասվում է, որ լճի մինչև ջերմությամբ պատվելը ջրի սառնությունից «Բառասնից մարմինը պատառոտվում է. «Եւ ի խստութենէ օդոյն սառուցեալ պաղեցան ջուրքն և պատառեցին զմարմինս մոցա»⁵²: Նրանց օրհնաբանության և ցրտից մարմինների պատուվելու մասին վկայաբանության հետևողությամբ Հովասափը գրում է.

*Արհնեին զՏէր անդադար,
Տանջանացն համբերեին,
Եւ պատառաւէր մարմինքն,
Չոր և պաղն կարմրեին:*

Վկայաբանությունում ասվում է, որ քառասունից մեկը, չդիմանալով ջրի ցրտությանը, ջրից ելնում և վազում է ափին կառուցված բաղնիքը, որտեղից տաք գոլորշի էր ելնում և մա մահանում է ջերմաստիճանների այս տարբերություններից: Ֆիզիկական այս մահվանը հոգևոր խորհուրդ հաղորդելով՝ Հովասափը գրում է.

*Մէկն ի թաղանիս անկաւ
Եւ եղաւ թաժին սատանին:*

Վկայաբանության մեջ ասվում է, որ «Բրիստոս քառասուն լուսապսակ է իջեցնում նրանց համար լճի վրա, որը կրում են երեսունհինգը և մեկը մնում է, քանի որ քառասունից մեկը դեպ բաղնիքն էր գնացել: «Բառասնից հսկելու համար թողնված պահապաններից մեկը, տեսնելով այս լուսապսակը, իրեն ջուրն է մետում, որ ինքը ևս տիրանա երկնային պսակին: Նույն ձով Հայսմավորքային տարբերակում է ասվում. «Եւ մի ոմն ի զօրականացն, որք պահեին զսուրբն, զի մի ոք փախիցէ ի լճէն, արթուն էր և տեսանէր զայն»:

Հովասափը ասկայն, այս դրվագը ներկայացնելիս գրում է, որ բաղնեպանն է գնում պսակի ետևից: Հայսմավորքում մասն ասվում է, որ լճի վրա ճառագող լույսը և ջերմությունը ջրի մեջ եղող 39-ի վրա իջած լուսապսակներից էր: Այնինչ, Հովասափը գրում է, որ բաղնեպանը տեսնում է, թե 40-րդի համար նախատեսվածը լողում է ջրի վրա և մետվում է լիճը, որ ինքը տիրանա այս լուսապսակին.

*Բաղնապանն տեսեալ զմինն,
Որ շուրջ գայր ի վերայ լճին,*

⁵⁰ Վ. Գորգյան, Հովասափ Մեթաստացի, էջ 107:

⁵¹ Յայսմավորք, էջ 551:

⁵² Նույն տեղում:

*Անկալ մա ի մէջ ջրին**Տիրացաւ անանց պըսակին:*

Հովասափն ամենայն հավանականությամբ օգտագործել է այս պատմության՝ Սեբաստիայի տեղային մի ավանդությունը:

Վկայաբանության մեջ, այդ թվում և Հայսմափութային տարբերակում, ասվում է, որ առավոտյան քառասունին էլ հանում են ջրից և նահատակում: Նրանցից մեկը, թեև վիրավոր, սակայն ողջ է մնում: Նրան ասում են, եթե ցանկանաս, կբուժեմք քո վերքերը: Այդ ժամանակ մայրը որդու կողքին գոտեպնդում է նրան, որ չգայթակղվի և բուժվել ցանկանալով զրկվի երկնային պսակից: Զինվորները նահատակվածների մարմինները մի սայլին են դնում, որ տանեն և այդտեղ են թողնում այս Մելիտոն պատանուն: Մայրը սակայն, վերցնում է նրան, զրկում և գնում սայլի ետևից և ճանապարհին այս պատանին ավանդում է հոգին՝ միանալով իր ընկերներին և լրացնելով քառասուն թիվը:

Գեղեցիկ և հուզիչ այս դրվագը, սակայն, բավականին անորոշ և տարտամ է ներկայացնում Հովասափը, և եթե մեկը չիմանա բուն պատմությունը, ապա դժվար թե նա կարողանա այն հասկանալ հետևյալ տողերից.

Էրանի այն ծնողին,

Որ զառակն ուտվն ունէին,

ԶՄելիտոն մանուկս ընկալ

Տէր Յիսուս և եղ ի սայլին:

Հաջորդ տողերում արդեն բանաստեղծորեն ներկայացնում է, թե ինչպես նահատակների մարմինները տանում և այրում են և լցնում մի գետ, որտեղ նրանց մասունքները ջրի վրա փայլում են աստղերի նման, որոնք ի մի է ժողովում և ամփոփում այս զավառի եպիսկոպոսը:

Վաղ շրջանի քրիստոնեական գրականության սիրված պատմություններից էր Հովհաննես կամավոր աղքատի պատմությունը, որի Հայսմափութային տարբերակում այն ունի հետևյալ վերնագիրը՝ «Վարք Յովհաննու վասն Բրիստոսի աղքատացելոյ»⁵³:

Այս վարքի ընդարձակ տարբերակի սկզբում ասվում է, որ Հովհաննեսը որդին էր Եվտրոպիոս ստրատելատի Արկադեոս կայսեր ժամանակ և երբ Կոստանդնուպոլսի հայրապետն էր Հովհաննես Ոսկեբերանը: Եվտրոպիոսը ուներ երեք որդի, որոնցից երկուսը պալատում էին ծառայում և Հովհաննեսին ևս ցանկանում են ամուսնացնել և պալատական դարձնել:

18 տարեկանում սակայն, նա հանդիպում է մի կրոնավորի, որը իր վանքից եկել էր Երուսաղեմ ուխտի գնալու համար, ու Հովհաննեսը նրան խնդրում է, որ ետ վերադառնալուց իրեն ևս վերցնի իր հետ և տանի իրենց վանքը: Երբ վանականը գնում է, հորը խնդրում է իր համար մի Ավետարան ընդօրինակել, որպեսզի ծնողներից այն հիշատակ մնա իրեն: Երբ կրոնավորը գալիս է, ծածուկ ծովափ են գնում, որպեսզի այնտեղից նրա

⁵³ Յայսմաութ, Կոստանդնուպոլիս, 1834, էջ 29:

վանքը գնան, նավապետը սակայն ասում է, որ նավը մինչև ամբողջությամբ չլցվի, ինքը նավարկության դուրս չի գա, հակառակ պարագային պահանջում է, որ վճարվի ողջ նավի համար: Հովհաննեսը գնում, ծնողներից խնդրում է այդ գումարը, տալիս նավապետին, և նրանք ծով են դուրս գալիս⁵⁴:

Հովասափը այստեղ ևս զանց է առել այս ողջ նախապատմությունը: Փոխարենը, մինչ վարքին անցնելը, նա խրատա-ուսուցողական ուղղվածություն հաղորդելով իր գրածին, հորդորում է նմանվող լինել այս Հովհաննես աղքատին: Բուն պատմությունը նա սկսում է հետևյալ քառատողով, որում խտացնում է վարքի՝ Հովհաննեսի մինչև ծնողներից հեռանալն ընդգրկող հատվածը.

*Ուներ փոքր Աւետարան մի՛
Կազմեալ ի տիպս արծաթի
Եւ գաղտ փախաւ ի ծնողաց,
Ել ի վանքն կրանաւորի:*

Այս ստեղծագործության հաջորդող տները, սակայն, զուգահեռ են ընթանում վարքին՝ բանաստեղծական սեղմ ձևի մեջ գեղեցիկ կերպով ներկայացնելով ողջ պատմությունը, ծնողների հուզիչ ապրումները, թե ինչպես չեն իմացել, որ իրենց կալվածքի մուտքի մոտ երկար տարիներ մնացող վիրավից աղքատը իրենց որդին է եղել: Հովասափը, ծնողների ապրումներին միախառնելով և իր ապրումները, իր կողմից ավելացնում է. «Այլև գողբամ ծնողացն»:

Այս ուսանելի պատմության զլխավոր իմաստն այն է, որ յուրաքանչյուրը պետք է օգնի իրեն հանդիպած աղքատին, որովհետև միգուցե այդ աղքատը հենց իր հարազատն է և որ օտարին օգնելով մենք մեր հարազատների համար ենք հոգևոր բարիք գործում: Բանաստեղծության վերջին քառատունում այս միտքն արտահայտվում է հետևյալ ձևով.

*Երրորդութեան միակի՛ն
Փառս տանք առ Հայր և Որդին,
Ով որ զմեզ յիշէ առ Տէր,
Տէրն տա Իր արքայութիւն՝⁵⁵:*

Հովասափ Սեբաստացու թե՛ պատմական թեմաներով ստեղծագործությունները և թե՛ ընդհանուր քրիստոնեական թեմաներով գրված սրբախոսական գործերը և թե՛ հատկապես հայոց նոր վկաներին նվիրված գործերը բացի կրոնա-եկեղեցական իրենց կարևորությունից, ունենն ևս ազգային մի մեծ խորհուրդ՝ ծառայելով հոգևոր-քաղաքական այն մաքառմանը, որը նպատակամղված էր հայոց դավանանքի պաշտպանությամբ նաև ազգային ինքնության պահպանմանը: Ինչպես գրում է Հ. Սիմոնյանը, սրբախոսական գրականության տարբեր ժանրերին դիմելով՝ Հովասափ Սեբաստացին «գեղարվեստական

⁵⁴ Վ. Գ—որգյան, Հովասափ Սեբաստացի, էջ 109:

⁵⁵ Վ. Գ—որգյան, Հովասափ Սեբաստացի, էջ 113:

պատկերավորությամբ ներկայացրել է քրիստոնեության բարոյագիտական առանցքային դրույթները, հայոց մահատակների օրինակով քարոզել հավատացյալների վարքի կանոնները, վկայաբանական երկերն օժտել հայրենասիրական պաթոսով, ինչի շնորհիվ «Քրիստոսի ուսմունքի մահատակ հերոսները դարձել են մահ հայրենիքի ուխտյալ հավատավորների խորհրդանիշներ»⁵⁶:

⁵⁶ Բրիտրոնյա Նայսարան հանրագիտարան, Նովատի Սեբաստացի բառահոդվածը, Երևան, 2002, էջ 604: